ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ
բանասիրական գիտ. դոկտոր

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՅԻՆ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՐՀԻԿ ԳՐՔԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Հայերի համար տպարան ունենալը հայրենի հողի վրա դժվարին խնդիր էր շարունակական պատերազմների պատճառով: Անգամ Նոր Ջուղայում Խ. Կեսարացու բացած տպարանը 1636-1642 թթ. հնարավոր չեղավ պահել, իսկ հետագայում շահագործելու փորձերը ձախողվեցին[1]*: Եվրոպայում Հռոմի պապերը չէին աջակցում, իսկ օգնելու դեպքում դավանաբանական պահանջներ էին դնում*[2]*, դժվարություններ հարուցում*[3]*: Բայց Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցուն (1655-1680) ի վերջո, մեծ դժվարությամբ հաջողվում է դա: 1655 թ. Մատթեոս Ծարեցի վարդապետը կարողանում է տպարան ձեռք բերել Հոլանդիայի Ամստերդամ քաղաքում, լույս ընծայել Ն. Շնորհալու «Յիսուս Որդին», սակայն հիվանդանում է եւ տպարանը հանձնում առեւտրական Ղըլջենց Ավետիսին՝ Ոսկանի եղբորը: Վերջինս տպարանը կտակում է Ս. Էջմիածին ու Ս. Սարգիս վանքերին: «Սա առաջին դեպքն էր հայերի մեջ,- գրում է Լեոն,- որ տպարանը բարեգործական նպատակով նվիրվում էր մի հիմնարկության»*[4]*: Ծարեցուն փոխարինում է Կարապետ վրդ. Անդրիանացին՝ Ոսկանի աշակերտը: Շուտով առեւտրական Ավետիսի պահանջով Ամստերդամ է հասնում ձեռներեց ու գիտակ եղբայրը՝ Ոսկան Երեւանցին (1614-1674): Ճանապարհին 1662 թ. նա լինում է Զմյուռնիայում եւ Լիվոռնոյում՝ հովանավորներ գտնելու*[5] *տպվելիք*

---

[1] **Ռ. Իշխանյան**, Հայ գրքի պատմություն, հ. Ա., Երեւան, Հայաստան, 1977, էջ 352-360:
[2] **Ս. Մխիթարյան**, Ոսկան Երեւանցի, ԼՀԳ, 2016, թ. 2, էջ 266-267:
[3] Տես **Արտակ եպս. Սմբատեան**, Ս. Էջմիածնի միաբանութեան գրական-կրթական գործունեութիւնը եւ Մայր Աթոռի տպարանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածն, 1973, էջ 30:
[4] **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 5, Երեւան, 1986, էջ 228:
[5] Նույն տեղում, էջ 230:

Աստվածաշնչի համար: Ոսկանն իր 10-ամյա գործունեությունը տպարանում սկսում է Կար. վրդ. Անդրիանացու «Շարակնոցի» (1664-1665) համատեղ տպագրությամբ[6]*: Ռ. Իշխանյանն իրավամբ տպարանը Ոսկանյան է անվանում՝ փաստելով, թե այդ ասելով «...պետք է հասկանալ մի նշանակալի կազմակերպություն, որ գործունեությունն սկսել է նախքան Ոսկան Երեւանցու մասնակցությունը նրա աշխատանքներին եւ շարունակել է Ոսկանի մահից հետո»*[7]*: Բացի այդ՝ տպարանը նաեւ նրա եղբոր ջանքերով էր պահպանված ու նրա իսկ նվերն էր Մայր Եկեղեցուն, ուստի Ոսկանյան տպարան անվանումը շատ տեղին է:*

Արդեն տպարանի գործունեության սկզբում պարզ դարձավ, որ այն մշակութային հաջողված ձեռնարկ է: Ծարեցու 1660 թ. տպագրած «Յիսուս Որդին» լույս էր տեսել 1200 օրինակով: Նրա մահից հետո նրան փոխարինելու եկած Կարապետ վրդ. Անդրիանացին եւ Ավետիսը 1662 թ. միասին տպագրել էին նոր Սաղմոսարանի 2700, 1663 թ. Ժամագրքի 3000, իսկ 1666-1668 թթ. Ոսկանի նախաձեռնած Աստվածաշունչը 5000 օրինակ: Աննախադեպ ձեռքբերումներ: Գրքերի այսպիսի առատությունը ոգեւորում է հայերին ամենուր:

Իր բազում նորարարությունների ու նախաձեռնությունների մեջ Ոսկան Երեւանցին փայլել է հազվագյուտ ներհայեցողությամբ: Լինելով բարձրաստիճան հոգեւորական՝ արքեպիսկոպոս, դեռեւս Ուշիում ծառայելու տարիներին նա արդեն աչքի էր ընկել կառուցողական ու կազմակերպչական հազվագյուտ ձիրքերով[8]*: Տպագրիչ եղած տարիներին Ոսկանը, հոգեւոր ընտիր գրականություն հրատարակելուց բացի, մտահոգված էր աշխարհական գրականությամբ եւ նրա հանրայնացմամբ, ինչը թելադրված էր նաեւ եվրոպական միջավայրի ազդեցությամբ: Այսպես ասած, ուսուցողական-գործնական գրականության հրատարակությունը կապվում է նրա տպագրական գործունեության եւ՛ սկզբնական, եւ՛ ուշ շրջանների հետ: Թեեւ Լեոն Ոսկանի առաջին աշխարհական գիրքը համարում է «Աշխարհացոյցը», բայց փաստերը խոսում են այն մասին, որ գիտնականի աչքից վրիպել է Ոսկանի «Քերականութիւնը», որը նա գրել*

---

[6] **Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան,** Հայ գիրքը 1512-1800 թթ., Երեւան, 1988, էջ 41:

[7] **Ռ. Իշխանյան,** նշվ. աշխ., էջ 407:

[8] **Ֆ. Բաբայան**, Ուշիի Ս. Սարգիս վանքը, Երեւան, 2005, էջ 9-11. նաեւ՝ **Ա. Մանուչարյան,** Սաղմոսավանք, Երեւան, 2015, էջ 78-79: Այս ուսումնասիրողները վկայում են, որ Ոսկանը մի քանի վանքերի առաջնորդ է եղել միաժամանակ, այդ թվում նաեւ՝ Սաղմոսավանքի:

եւ հրատարակել է 1666 թ.[9]*: Ճիշտ է՝ Ֆր. Ռիվոլան լատիներենով «Հայերենի քերականություն»*[10] *եւ մեկ-երկու Բառգիրք*[11] *էր գրել, բայց Ոսկանի աշխատությունը բացառիկ է: «Աշխատեալ թարգմանեցի ի բարբառոյ դաղմատրացւոցն ի հայս եւ անտի եւս ծաղկաքաղ արարեալ կարճառօտիւք, ի զբօսանս ուսումնասիրեաց զյաւէտ պիտանացուսն եւ զկարեւորսն հաւաքեցի...», - գրում է Ոսկանը*[12]*: Այսպես կոչված, գիտական ապարատը տրված է ժամանակի «աշխարհաբար» լեզվով, իսկ քերականական իրողությունները վերաբերում են գրաբարի քերականությանը: Այսինքն՝ գիտական լեզուն աշխարհիկ մի լեզու է, որը ժամանակի համար էական նորություն էր: Օգտագործված են նաեւ ժամանակի առաջավոր քերականագիտական հասկացություններ, եզրույթներ, սկզբունքներ: Դրանով ինքը ներկայացրել է «... զհոլովս անուանց եւ դերանուանց եւ խոնարհմունս բայից՝ կարգաւորեալ կանոնիւք եւ գլխակարգութեամբ»*[13]*: Օգտագործել է ութ հոլովների համակարգ գոյականի (էջ 58-70) ու դերանվան համար (էջ 70-74), իսկ մնացած հատվածը նվիրված է բայի խոնարհմանը (էջ 74-111): Զարմանալին, սակայն, մի ուրիշ բան է: Բազմազբաղ այս անհանգիստ հոգին ինչպե՞ս եւ ե՞րբ է հասցրել իրականացնել ժամանակի գիտությանը հարիր այս քերականության դասագիրքը, որն արդյունք է բարձր հայրենասիրության ու նվիրումի:*

Մինչ Մ. Խորենացու «Աշխարհացոյցի» տպագրությունը, Ոսկանը 1664-1669 թթ. տպագրել է տասնմեկ-տասներկու[14] *անուն գիրք՝ դրանց շարքում մեծածավալ Աստվածաշունչը*[15]*, որն իր տպագրական եւ բնագրական որակով բացառիկ էր: Զարմանալի է նաեւ այն, որ նա տարեկան միջին հաշվով չորս գիրք է լույս ընծայել, ինչը ժամանակի համար չլսված իրողություն էր*[16]*: Ռ. Իշխանյանը հավելում է, որ «Աստվածաշնչի տպագրության ընթացքում (1666-1668) Ոսկան Երեւանցին սկսում եւ ավարտում է վեց ուրիշ գրքերի հրատարակություն» (չորսը՝ 1667 թ., եր-*

---

[9] **Ոսկան Երեւանցի**, Քերականութիւն, Ամստերդամ, 1666, 112 էջ:

[10] **Ֆր. Ռիվոլա,** Բառգիրք Հայոց, հայ եւ լատին լեզու, 1621, 487 էջ. վերատպություն՝ Բառգիրք Հայոց /DICTIONARIVM ARMENOLATINVM, Փարիզ, 1633, 414 էջ:

[11] **Ֆր. Ռիվոլա,** GRAMMATICAE ARMENAE: Լատիներէն եւ հայերէն լեզ., Միլան, 1624, 319 էջ:

[12] **Ոսկան Երեւանցի**, նշվ. աշխ., էջ 111:

[13] Նույն տեղում:

[14] Տես **Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան,** նշվ. աշխ., էջ 41-55 (Նկատի ունենք հետեւյալ համարները՝ 55-62, 65-67):

[15] Նույն տեղում, էջ 44-50:

[16] **Լեո,** նշվ. աշխ., էջ 232:

կուսը՝ 1668 թ., սրանցից վերջինը «Աշխարհացույցն» էր ու «Վարդանի Աղվեսագիրքը»)[17]: Այն վերնագրված էր «Գիրք աշխարհաց եւ Առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք»[18]: Գիրքն սկսվում է Մ. Խորենացուն նվիրված ներբողով, որը ծայրակապի (ակրոստիքոսի) սկզբունքով գրված ձոն է՝ «Ո-ս-կ-ա-ն-ի» հոդումով[19]: Այսպես.

Ոգեմ զբանս գովեստի, ճշմարտաբան առնս մեծի:
Սակաւ բանիս յայտածողի, բայց զօրութեամբ զարմանալի:
Կաթնաբուծից չամոքելի, բայց գիտողաց ախորժելի:
Առ դիտողաց զկէտ սահմանի, իմաստութիւն որ ըստ կարգի:
Ներակերտեալ զբանս աշխարհի տարորոշեալ ըստ գաւառի:
Ի իւրաքանչիւրսն ըստ պատշաճի՝ Մօսէս քերթող Խորենացի[20]:

Քերթողահոր այսպիսի փառաբանումը եւ նրա նկատմամբ անթաքույց մեծարանքն ինքնին բարձրացնում են եւ Ոսկանի պատիվը: Նա՝ ԺԷ. դ. բանաստեղծը, ստեղծագործում է նոր լեզվով, նոր ոճով: Արժեւորված է նաեւ Խորենացու սքանչելի երկերից մեկը՝ «Աշխարհացույցը»:

Այնպիսի տպավորություն է, որ տպագրիչը նախապես մտադիր է եղել «Աշխարհացույցը» տպել: Դա թերեւս հաստատվում է նրանով, որ այն բաղկացած է 88 էջերից, իսկ «Աղվեսագիրքը» սկսվում է դարձյալ 1-ին էջով (1-224): Հնարավոր է, որ համատեղ տպագրելու եւ մեկ հատորյակ կազմելու միտքը հղացել է ավելի ուշ: Թեմատիկ առումով էլ դրանք որեւէ կապ չունեն, բացի թերեւս նրանից, որ երկու ժողովածուներն էլ աշխարհական կյանքի մասին են:

«Մ. Խորենացու «Աշխարհացույցը» ծաղկաքաղ է արված Պապուս Ալեքսանդրացու «Երկրագրությունից», սակայն մասնավորապես Հայաստանի, Վիրքի, Աղվանքի, Ասիական Սկյութիայի, Պարսկաստանի նկարագրության բաժնում նա հանդես է բերում մեծ ինքնուրույնություն», - գրում է Բ. Հարությունյանը[21]: Ուրեմն Խորենացին իրեն համեմատաբար ազատ

---

[17] **Ռ. Իշխանյան,** նշվ. աշխ., էջ 472:

[18] «Մատենագիրք Հայոց», հ. Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2123: Պետք է ասել, որ որոշ գիտնականներ Աշխարհացույցը համարել են Ան. Շիրակացու երկը, թեեւ նկարագրվող աշխարհները վերաբերում են Արշակունյաց թագավորության տիրապետության շրջանին: Տես **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երեւան, 1984, էջ 105-107:

[19] «Գիրք Աշխարհաց եւ Առասպելաբանութեանց. որ է Աղուէսագիրք», ՅԱմսթէլոտամ, 1668, 312 էջ:

[20] Նույն տեղում, էջ 2:

[21] «Մատենագիրք Հայոց», հ. Բ., էջ 2123:

է զգացել մերձակա երկրների նկարագրության ժամանակ: Բայց երկու դեպքում էլ երկի արժեքը չի ընկնում: 1668 թ. Ամստերդամի ոսկանյան հրատարակությունը «Գիրք աշխարհաց» երկի առաջին տպագրությունն է մեզանում եւ օգտագործված է նրա համառոտ խմբագրությունը (կա նաեւ ընդարձակ խմբագրությունը)[22]: Սեն-Մարտենը գտնում է, որ Մովսեսն օգտվել է Պտղոմեոսի աշխարհագրությունից, բայց՝ Պապուս Ալեքսանդրացու խմբագրությամբ: Այսպիսով, «...աշխարհական գրականության առաջին հիմքը Ոսկանի այս հրատարակությունն է», - գրում է Լեոն՝ մի կողմ թողնելով Հակոբ Մեղապարտի «Աղթարքը» եւ «Ուրբաթագիրքը»[23]: Չի կարելի չխոսել գիտնականի մի հետաքրքիր դիտողության մասին. նա նշում է, որ հայի համար «...նորություն է նույն այդ հնացած աշխարհագրությունը»[24]: Արդեն 1492 թ. հայտնաբերվել էր Ամերիկան, իսկ 1606 թվականին՝ Ավստրալիան: «Ապշեցնող հակասություն կար հայի իրական կյանքի ու գրականության միջեւ,- շարունակում է Լեոն: -Իրական կյանքում հայը անդադար շրջում էր, որի համար արգելք չէին ծովերն ու անապատները, որ շփվում էր բազմաթիվ ազգերի հետ եւ ուներ այնպիսի հարուստ աշխարհագրական տեղեկություններ, որոնք կարող էին գրգռել շատ ազգերի նախանձը: Բայց իր գործնական կյանքից դուրս, իր գրականության մեջ, դա մի զարմանալի անտեղյակ, միամիտ ազգ էր»[25]: Իսկապես, հայ ուսյալ մարդիկ տպագրում են Աշխարհացույց, որը դեռեւս գիտելիք էր տալիս ընդամենը երեք աշխարհամասերի մասին: Մինչդեռ Երկրի վրա բազում հայտնագործությունների հետ մեկտեղ ավելացել էին նոր աշխարհամասերը, նոր ազգերը: Բայց գոնե պատմագիտական առումով մենք կարող ենք եւ պետք է Ոսկանի այս արարքը գնահատենք իբրեւ պատմամշակութային արժեքի պահպանությանը միտված քայլ: Մեզանում դեռ շատ ու շատ երկեր սպասում էին իրենց ուսումնասիրությանն ու տպագրությանը: Իսկ Ոսկանը ակամա կատարում էր դա: Նրա հրատարակությունը անչափ կարեւորելով՝ Ն. Մառը «Աշխարհացույցը» բաժանում է երկու մասի: Առաջին մասը անվանում է Աշխարհագրություն, իսկ երկրորդը՝ Ճանապարհացույց, որը Հայաստանի քաղաքների ուղղություններն ու հեռավորություններն էր ցույց տալիս:

---

[22] Նույն տեղում:
[23] **Լեո,** նշվ. աշխ., հ. 5, էջ 233:
[24] Նույն տեղում:
[25] Նույն տեղում:

Հայագետը, անցնելով գրքի երկրորդ մասին՝ «Աղվեսագրքի» թարգմանության հարցին, ապացուցում է, որ այն արաբերենից թարգմանություն չէ, ընդհակառակն՝ հանդիպում են հայերեն բառեր, հասկացություններ եւ դարձվածքներ, որոնք արաբերենի թարգմանիչը հաճախ ճիշտ չի հասկացել եւ սխալ թարգմանություններ է կատարել: Եւ դա ներկայացնում է իբրեւ եվրոպացի մի քանի գիտնականների կողմից առաջադրված կեղծ հիպոթեզ, որ բնավ վկայակոչված փաստերով չի հաստատվում[26]*: Գիտնականը ցույց է տալիս Գոչի եւ Այգեկցու առակների տարբերությունները եւս ու հաստատում, որ Այգեկցին որոշ իմաստով շարունակում է նրան, բայց եւ տարբերվում է նրանից: Այսինքն՝ առակագրությունը ժամանակի հայ կյանքում տարածված էր, բայց հեղինակներն իրականում անշփոթելի էին: Նրանցից յուրաքանչյուրն իր ուրույն ոճն ունի, առակաստեղծման իր եղանակը:*

Հենց այս բնագրագիտական ուսումնասիրությամբ, կարելի է ասել, սկսվում է հայ գրատպության խնդրի քննարկման մի ուրիշ կարեւոր կողմը: Դա մեզանում առկա հեղինակային բնագրի տեքստի ձեռքբերման եւ տպագրական գործը կազմակերպելու խնդիրն է, որը մինչ այդ երբեւէ քննարկման հարց չի դարձել: Ցավալին այն է, սակայն, որ հարցն այսօր էլ դեռեւս փակված չէ: Այն խնդիրը, թե որտեղից է վերցված Այգեկցու «Աղվեսագրքի» բնագիրը, ինչ ձեռագրական ակունքներ կան, որքանով են դրանք ստույգ կամ աղճատված եւ հարակից բազմաթիվ այլ բանասիրական բնույթի կնճիռներ դեռեւս այսօր էլ կարոտ են պատասխանի: Օրինակ, Մաղ. արք. Օրմանյանը, որ անչափ բարձր է գնահատում Ոսկանի ծառայությունը եւ նվիրվածությունն իր ժողովրդին, խիստ քննադատում է նրան Աստվածաշնչի տեքստային աղճատումների, նրանում կառուցվածքային մասերի տեղաշարժերի համար: Այսպես. «Եւ անկէ (Պիրոմալիէ- Ս. Մ.) ուսաւ լատին լեզուն, երբ Լատինն ալ իրմէ հայերէն կը սորվէր. երկուքն ալ անկատար, որով անընտել եւ անսովոր ոճով եւ աղաւաղ եւ անպէտ շարադրութեամբ թարգմանութիւններու ձեռնարկեցին, մինչեւ իսկ նախնեաց գրուածներուն եւ Աստվածաշնչին թարգմանութեան ձեռք մտցնել յանդգնեցան»[27]*: Սա այն դեպքում, երբ տպագրական առումով, նոր գիտական գլխաբաժանումով դա բացառիկ օրինակ էր մեզանում:*

---

[26] **Н. Марр,** Сборник притч Вардана, к. 1, С. Петербург, 1893, с. 98. Նաեւ՝ **И. Орбели,** Избранные труды, т. 1, Москва, 1968, с. 222-224. **Հ. Յակ. Տաշեան,** Ժողովածոյք առակաց Վարդանայ, Վիեննա, 1900, էջ 10:

[27] **Մ. արք. Օրմանեան,** Ազգապատում, հ. Բ., Էջմիածին, 2001, էջ 2948:

Առ այսօր ուսումնասիրություններ են կատարվում Այգեկցու «Աղվեսագրքի» առնչությունների, ձեռագրական առանձնահատկությունների, տեքստի ամբողջականության եւ այլ հարցերի վերաբերյալ: Սկզբում արաբերենից դրա թարգմանված լինելու վարկածը բացառելը, այնուհետեւ կապը Փարիզի ազգային գրադարանի ձեռագրի հետ ցույց տալը, այնուհետեւ դրա, այն է՝ «Վարդանի առակների» ու «Աղվեսագրքի» կապը ապացուցելը վիթխարի ջանքեր են պահանջել ուսումնասիրողից: Գիտնականը ցույց է տալիս, որ դրանք միեւնույն հեղինակի նույն ժողովածուներն են՝ տարբեր վերնագրերով ու ծավալներով: Փաստորեն, ամենասկզբում ստեղծվել են երկու՝ ընդարձակ եւ համառոտ խմբագրություններ (ձեռագրական տարբերակներ)[28]*: Վկայաբերելով Ն. Մառի կարծիքը՝ Մ. Աբեղյանը հավելում է. «Ամենայն հավանականությամբ նա ինքը (Վարդանը-Ս. Մ.) կազմած պիտի լինի իր առակների մի երկու փոքրիկ ժողովածու. գուցե եւ ուրիշները նրա ճառերից հանել են առակները եւ ի մի խմբել, որով առաջացել են Վարդանի առակները»*[29]*: Ասվածից կարելի է ենթադրել, որ համառոտ տարբերակների ստեղծումը հեղինակային է, թեեւ չի բացառվում եւ մեկ այլ անձի կողմից ստեղծված լինելու գործոնը: Բայց, ինչպես նշում է գիտնականը, քանի որ ժողովածուների սկիզբը դրվել է Այգեկցու առակներով, ուստի «...ժողովածուները երեւան են գալիս Վարդանի անունով՝ ունենալով վերնագիրս «Գիրք առակաց՝ ասացեալ վարդապետին Վարդանայ ի պէտս հոգւոյ եւ մարմնոյ պիտանի»*[30]*: Մի ուրիշ ձեռագրի մեջ էլ՝ «Արդ գրեցաւ Առակաց գիրքս»: Գիտնականը ճշմարտացիորեն ենթադրում է, որ «Գիրք առակաց»-ը եւ «Առակաց գիրք Վարդանայ»-ն նույն ժողովածուներն են, որոնց հեղինակը Վարդանն է: Իսկ «Վարդանի առակներն» ու «Աղվեսագիրքը» տարբեր կերպ են վերնագրված, բայց առակագրի միեւնույն ժողովածուն են, որոնք, ինչպես տեսնում ենք, ձեռագրական փոփոխությունների, այս դեպքում՝ աղավաղումների են ենթարկված:*

Ոսկանի 1669 թ. «Գիրք Աշխարհաց...»-ի 1-ին հրատարակությունից մինչեւ ԺԷ. դ. վերջը՝ 30 տարվա ընթացքում, գիրքը նույնությամբ տպագրվել է երեքից չորս անգամ «Գիրք Աշխարհաց եւ Առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք» վերնագրով[31]*: Դա նշանակում է, որ մեծ*

---

[28] **Н. Марр,** նշվ. աշխ, к. 1, с. 98:

[29] **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Դ., Երեւան, 1970, էջ 197:

[30] Նույն տեղում:

[31] Մովսէս Խորենացի, Աշխարհացոյց - Աղուէսագիրք: Ամստերդամ, 1668, 312 (88+224) էջ. Տես նաեւ՝ **Ն. Ոսկանյան, Ք. Կորկոտյան, Ա. Սավալյան,** նշվ. աշխ., էջ 55:

է եղել հետաքրքրությունը նրա հանդեպ ինչպես ԺԳ.-ԺԴ. դդ., այնպես էլ այս դարում: «Առակագիրքը «Աղուէսագիրք» անունով թարգմանվել է արաբերեն՝ արաբախոս քրիստոնյաների համար, ինչպես ավելի ուշ՝ նաեւ վրացերեն լեզվով»,- գրում է Մ. Աբեղյանը[32]*: Ինչպես տեսնում ենք՝ Ն. Մառի եւ Մ. Աբեղյանի կարծիքները լրացնում են իրար, հաստատում Վարդանի ժողովածուի նախնական լինելը եւ տպագրիչի անսխալականությունը բնագրերի ընտրության ու լույսընծայման հարցում: Դա գրքի նկատմամբ եղած մեծ պահանջարկի արտահայտություն էր:Իսկ ժողովածուի սկզբնամասում ներառված առակները՝ իր ստվերը ջրում տեսած շան, իբր փոքր մեղք գործած լվի եւ թագավորի որդու մասին, ինչպես եւ հատկապես կենդանիների մասին եղածները, մեծապես հիշեցնում են Արեւելքի քրիստոնյա եւ մուսուլման իմաստունների սրախոսությունները: Դրանցից մեկը ազգությամբ ասորի Աբուլ-Ֆարաջն է (1226-1286): Նա տիրապետել է նաեւ հայերենին, ու նրա «Հետաքրքրաշարժ պատմությունների գիրք» ժողովածուում մեզ համար հետաքրքիր նորություններ կան: Փաստորեն նա Այգեկցու կրտսեր ժամանակակիցն է՝ ստեղծագործած ԺԳ. դարի Բ. կեսին, եւ օգտվել է Վարդանի առակների մի շարք այուժեներից*[33]*, որով կրկին հաստատվում է հայկական առակների ե՛ւ Արեւելքում մեծ տարածվածությունը, ե՛ւ նախնական լինելը: Զմոռանանք նաեւ, որ մշակութային փոխազդեցությունները եւ ներթափանցումները եղել են երկկողմանի՝ մենք ուրիշներից ենք ազդվել, ուրիշները՝ մեզնից, ու այսպես շարունակ:*

Կա մի ուշագրավ հանգամանք եւս: Ոսկանյան տպարանում 1769 թ. տպագրվեցին Առ. Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ը[34] *եւ 1775 թ.՝ տիրոջ անժամանակ մահից մի տարի անց՝ նաեւ առաջին աշխարհաբար հայերեն գրված գիրքը: Եթե Պատմությունը առաջին ժամանակակից կենդանի հեղինակի երկի հրատարակություն էր, որի նախադեպը մեզանում չկար, ապա 2-րդը՝ թվաբանության դասագիրք՝ շարադրված ժամանակի խոսակցական հայերենով, ինչպես թարգմանիչն է գրում, «Արհեստ համարողութեան՝ թարգմանեալ ի պէտս Հայկազունեաց եւ մանաւանդ վաճառականաց»*[35] *երկն է: Համոզված ենք, որ Մարսել տեղափոխվելուց հետո Ոսկանն ինքը ծրագրել է այսպիսի գրականության տպագրությու-*

---

[32] **Մ. Աբեղյան,** Երկեր, հ. Դ., էջ 198:

[33] Տես **Աբուլ-Ֆարաջ,** Հետաքրքրաշարժ պատմությունների գիրք, Երեւան, 1981, էջ 127-134:

[34] Տես **Առ. Դավրիժեցի,** Գիրք պատմութեանց, Ամստերդամ, 1669, 650 էջ:

[35] «Արհեստ համարողութեան» (Աշխարհաբար), Մարսել, 1675, էջ 4:

նը, բայց գործերը վատթարացել են, եւ նա չի հասցրել շատ կարեւոր նախաձեռնություններ կյանքի կոչել: Պետք է փաստենք, սակայն, որ սույն հրատարակությամբ աշխարհաբարի գործածության իրական ժամանակի հարցը պետք քննվի ոչ թե ԺԹ. դարի սահմաններում, այլ ավելի առաջ[36]*: Ոսկանի՝ յուրայինների կողմից քննադատության արժանանալու մասին արդեն խոսվել է: Բայց Ոսկանը նույնքան քննադատության է արժանացել Վատիկանի ցածրաստիճան ու բարձրաստիճան պաշտոնյաների կողմից*[37]*: Օտարության մեջ նա ակամա շրջապատված էր ինչպես սիրելիներով, այնպես էլ անգիջում հակառակորդներով:*

Իր կյանքի վերջին տասնամյակը տարագրության մեջ նրան պարգեւում է եւ՛ երջանկության բազում պահեր, եւ՛ տրտմության ծանր վայրկյաններ: Նրան մեծ անհանգստություն էին պատճառում հարատեւ նյութական դժվարությունները եւ կուտակված պարտքերը: Այս ծանր կացությունը դրդել էր պատճառաբանված ու չպատճառաբանված գիջումների, որոնց մասին թերեւս իրենից բացի ոչ ոք չգիտեր: Անվստահելի յուրայինների համար, անհանդուրժելի կաթոլիկ աշխարհի համար. դա իսկապես ծանր էր, ուղեկցվում էր աջից ու ձախից հասցվող հարվածներով: Ուշագրավ տեղեկություններ կան այն մասին, որ նա տպագրված գրքերի ձեռագիր օրինակներն ուղարկել է Հռոմի եկեղեցական ժողովներին ու գրաքննիչներին, որպեսզի իրեն չմեղադրեն հերետիկոսական գրականություն տպելու մեջ: Իհարկե, նա իրեն այդ «մեղքից» այդպես էլ ազատել չի կարողացել: Հայկական տպագրության առաջընթացի դժվարին ուղիներում նյութական ու հոգեկեղեք տառապանքները հանգեցրել են նրան, որ 1671 թ. Հռոմում նա օգնություն է խնդրել «Ժողովից եւ թույլտվություն՝ գոնե իր տպագրած գրքերը լիովին իրեն վերադարձնելու մասին. Ոսկանին նյութապես օգնել չէր կարող նաեւ Հ. Ջուղայեցին, թեեւ խոստացել էր....ընդ որում՝ բացառված չէ, որ կաթողիկոսի խորհրդով է Ոսկանը որոշում ընդունել տպարանը կաթոլիկական աշխարհ տեղափոխելու»[38]*, - գրում է Ռ. Իշխանյանը: Այս եւ շատ այլ հարցեր, թեեւ բացահայտում են նշանավոր հայի անցած ուղու դժվարությունները, սակայն երբեք չեն կարող խաթարել նրա պայծառ հիշատակը: Ոսկան Երեւանցին հայ տպագրական արվեստի բնագավառում մնում է իբրեւ բացառիկ մեծություն:*

---

[36] **Ռ. Իշխանյան,** նշվ. աշխ., էջ 405-406:
[37] Նույն տեղում, էջ 477:
[38] Նույն տեղում, էջ 478:

РЕЗЮМЕ

Воскан Ереванци (1614-1674) имел сан архиепископа, отличился церковноугодными делами и, будучи священником Уши, проявил себя в качестве реставратора и созидателя. 1664-1674 годы стали годами беспрецедентного подъема его деятельности на чужбине. Как и его предшественники печатники, он предпринял издание Библии, завершившееся удачей. Воскан Ереванци напечатал также Сахмосаран (Псалтырь), Шаракноц (Сборник духовных гимнов) и другие ценные книги. Вскоре он заметил, что на родине есть большая потребность в мирской литературе и в учебниках. Предпринятые им усилия в этом направлении увенчались новыми научными и культурными обретениями. В 1669 году он печатает учебник Грамматики, Ашхарацуйц (Географию) Мовсеса Хоренаци и сборник басен Вардана Айгекци, одновременно "Книгу историй" Аракела Даврижеци, ставшую первой армянской печатной книгой, увидевшей свет при жизни автора.

SUMMARY

Before his publishing activity Voskan of Yerevan (1614-1674) became an archbishop, was noticed as an active devotee to church matters and as a talented restaurateur. The period from 1664 to 1674 is marked by an unprecedented upward in his activities abroad. Like previous publishers, he undertook the publication of the Bible, Psalter, Hymn Book, and other ecclesiastical books. He soon noticed that there was a great need of secular literature and textbooks too. His efforts achieved new scientific and cultural level. In 1669 he published a Grammar textbook, together with the "World Map" of Movses of Khoren and fables of Vardan of Aygek. At the same time he published the "Book of History" by Arakel of Tabriz, which was a unique collection to come out during his life.